



Կեղեասիկեանց Չորանոցը  
La Caserne des Célestins.

ղոցը, արեւելքէն Արսընալ փողոցը, իսկ արեւմուտքէն Պաի-Միւսկ (Petit-Musc) փողոցը, որով կանոնաւոր քառակուսի մը կը ձեւացընէր. մինչդեռ այսօր Բուլվար Հանրի Դ՝ վանքին մէկ երրորդ մասը ձեղքելով երկուքի բաժնած է եւ երկու եռանկիւններ ձեւացուցած, մեծագոյն մասը թողլով զօրանոցին, իսկ փոքրագոյնը՝ երբեմն անոր յարակից մասն եզոզ զիմացի դեանին : Վանքին եկեղեցին կը գտնուէր հիմակուան զօրանոցին հարաւային կողմը, Սիւլլի փողոցին եւ Բուլվար Հանրի Դ-ին իրար կտրած տեղը. բայց դժբախտաբար Բուլվար Հանրի Դ-ի սիրուն՝ զոհած են եկեղեցին, եւ նոր փողոցը, այսինքն Բուլվար Հանրի Դ-ն անցուցած են ճիշտ եկեղեցիին դեանին վրայէն, — անշուշտ Սիւլլի կամրջէն մինչեւ Բաստիլլի հրապարակն անխտոր ուղղութիւն մը տալու համար : Մեր՝ վերն իրբեւ ճակատ զարդարած արձանագրութիւնն ալ կը գտնուի գրեթէ նոյն եկեղեցիին տեղը :

Կեղեասիկեանց վանքին նախնական հիմնարկութենէն առաջ՝ փոքրիկ մատուռ մը կար հոս, զոր 1352 տարուոյ նոյեմբերի 10-ին քաղաքացի մը